

ՅԵ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԳՈՄԱԴԲՆ

ԻԲՐԵԿ
ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹ

ՊԵՏՀՐԱՑ-1930-ՅԵՐԵՎԱՆ



Digitized
by
Sanctuary



ՅԵ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
(ՊԵՏԱԿԱՆ ԱԽՏԱՐԱԿԱՆ ԱՍՏԻՎԱՆԵՐԸ)

631.86

Ա

ԳՈՄԱԴԲՆ ԻՐԻԵՎ ՊԱՐԱՐՏԱՆՑՈՒԹ

A 4434



ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1930-Ն. Պ. Պարագան

ԹԵՏՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՒԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Տիրամ 4000 Գրառ. № 3026 (բ) Հրատ. № 1183 Գալ. № 173

1. Ի՞ՆՉ ԲԱՆ Ե ԳՈՄԱՂՔԸ

Դյուղատնտեսական կենդանիները գլխավորաբար մնվում են բույսերով։ Կերը նրանց մարմնի միջով անցնելով՝ լերկու մասի յե բաժանվում։ մի մասը մնում է մարմնի մեջ, դառնում և նրան մնունդ. զրա հաշվին կենդանու մարմինն աճում է, մեծանում, կաթ, միս, բուրդ, կաշի յե արտադրում, կամ այդ մարսված նյութերի շնորհիվ կենդանին աշխատում եւ կերի մյուս մասը, վորը կենդանու աղիքներում չի մարսվում, դուրս եւ գալիս իրքն քրիֆ։

Ապրելու և աշխատելու ընթացքում կենդանու մարմնի նյութերը կամաց-կամաց մաշվում են և մարմնից դուրս են գալիս—մի մասը թոքերից, իսկ մյուս մասը մեզի միջոցով։

Վորպեսզի կենդանու տակը չոր, մաքուր և տաք լինի, ախտոներում փռում են ծղոտ, չոր փելին, չոր տերեներ և այլն։ Այդ նյութերը կոչվում են ցամքար։

Ահա այս յերեք նյութերը, ալսինքն՝ թրիքը, մեզը և ցամքարը լերը իրար հետ խառնում են, կոչվում եւ գոմաղք։

Գոմաղբը գլուղացիներին շատ ծանոթ նյութ է։ Մեր գլուղացիները գոմաղբը չորացնում են, նրանից ցան, աթար և ուրիշ վառելիք են պատրաստում։ Ուրիշ վոչ մի յերկրում, վորտեղ գլուղատնաեսությունը շատ զարգացած է, գոմաղբն այդպես չեն գործածում, այլ նրանով կերակրում են բույսերը։ Այն, ինչ վոր կենդանու մարմնից դուրս ե յեկել իբրև անմարս և մսակար նյութ, շատ լավ մնունդ ե դառնում բույսերի համար։ Մենք ել, յեթե ուզում ենք, վոր մեր հողի բերքատվությունը բարձրացնենք և մի հեկտարից 50 փթի փոխարեն 100—150 փութ բերք ստանանք, պարտավոր ենք առաջին հերթին ոգտագործել գոմաղբը։

Այս փոքրիկ գրքունկում կաշխատեմ կարճ կերպով ասել, թե ինչպես պետք ե անել այդ և թե ինչ ոգուտ կարող ենք ստանալ գոմաղբից, յեթե այն վառելու փոխարեն գործածենք հողի բերքատվությունը բարձրացնելու համար։ Գոմաղբի փոխարեն կարելի յե գործածել ուրիշ վառելիք, վորոնց մասին վերջում նույնպես կը խոսեմ։

2. Ի՞ՆՉ ՆՅՈՒԹԵՐ ԿԱՆ ԳՈՄԱՂԲԻ ՄԵԶ

Գոմաղբը մեծ մասով կազմվում ե բույսերի հաշվին, բայց բույսերը կենդանու մարմնի միջով անցնելիս, յերբ դառնում են գոմաղբ, այնպես

Խիստ փոխվում են, վոր վոչ մի նմանություն չի մնում նախկին վիճակի հետ համեմատած։ Չնայած դրան, միքանի կարեսը նյութեր, վորոնք գանվում են բույսերի մեջ, գրեթե ամբողջությամբ անցնում են գոմաղրի մեջ և նորից կարող են պետքական լինել նոր բույսերի սննդառության համար։ Տեսնենք, թե ինչ նյութեր են դրանք։

Բույսի մարմինը կազմված է լեռեք գլխավոր նյութերից—ջուր, վառվող նյութեր և մոխրը։ Սրանցից ջուրը մտնում է բույսերի մեջ՝ նրանց արմատների շնորհիվ հողի միջից։ Վառվող նյութերը կազմվում են կանաչ տերևների մեջ՝ արևի ճառագայթների ոգնությամբ, ողի մեջ տարածված ածխաթթու կոչված նյութից։ Իսկ մոխրն ամբողջությամբ բույսերի մեջ և մտնում հողի միջից՝ ջրի հետ միասին։

Բույսի մոխրն ել մի հասարակ նյութ չե։ Նրա մեջ շատ զանազան նյութեր կան։ Դրանցից ամենազլխավորներն են՝ ֆոսֆոր, կալիում, կիր, լերկաթ, մագնիում և միքանի ուրիշ վոչ շատ կարեսը նյութեր։ Բույսերի հանքային նյութերի մեջ շափազանց կարեսը և նաև ազոտ կոչված նյութը. բույսը վառելիս այս նյութը վառվող նյութերի հետ ցնդում է ողի մեջ, մոխրի մեջ չի մնում։ Բայց վորովհետեւ հողից և մտնում

բույսի մեջ, դրա համար ել այսուհետեւ սրան
ել հաշվենք մոխրալին նյութ:

Գոմաղբն ել նույն նյութերից ե կաղմիված,
ինչ վոր բույսը. նրա մեջ ել կան՝ ջուր, վառ-
վող նյութ և մոխրիր. Գոմաղբից յերբ ցան կամ
աթար են պատրաստում արեկի տակ չորացնե-
լով, նրա միջից դուրս ե գնում մեծ մասով ջու-
րը և, դրանից զատ, նրա ամենաարժեքավոր սը-
նընդանյութը՝ ազոտը:

Այդ ձեռվ չորացրած գոմաղբը (ավելի ճիշ-
տըն ասած՝ աթարը) թոնիրներում վառելուց հե-
տո մնում ե միքիչ մոխրիր. այդ ժամանակ վառ-
վող մասը դառնում ե գազ և տարածվում ե ո-
դի մեջ. Թոնիրի մեջ մնացած մոխրիրը ճիշտ նույն
մոխրն ե, ինչ վոր մնում ե բուկսերը կամ փայ-
տը վառելուց:

3. ԼԱՎ ԲԵՐՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՏԱԼ ԲՈՒՅՍՈՒՐԻՆ

Լավ կլինի յերկու խոսքով ծանոթանանք,
թե ինչ նյութերով են սնվում բույսերը. Այս-
տեղ չենք խոսի ջրի և ողից վերցրած մննդա-
նյութերի մասին: Ավելի կարեոր են մեզ հա-
մար այն մննդանյութերը, վորոնք մտնում են
բույսի մեջ արմատների ոգնությամբ՝ հողի մի-
ջից: Իս նրա համար, վոր հողի մննդարար հան-

բային նլութերը տարիների ընթացքում մտնում
են բույսի մեջ, և հողն աղքատանում ե ալդ նյու-
թերից, պակասում ե նրա բերքատվությունը:
Այզպիսի ուժից ընկած հողերը նորից ոգտազար-
ծելու համար դյուզացին նրան «խամ» ե թող-
նում, մեկ կամ միքանի տարի չի մշակում. դը-
րանով հողը նորից ուժի լե գալիս, հարստանում
ե սննդարար նյութերով, և այդ հողի վրա ցա-
նած բույսը նորից միքանի տարի լավ բերք ե
տալիս: Բայց դա հին, նահապետական միջոց ե,
և այնպիսի յերկրներում են հողը «խամ» թող-
նում, վորտեղ ժողովուրդը քիչ ե, իսկ հողը՝
շատ: Մեզ մոտ ալդ ձեի հողամշակությանը պի-
տի վերջ տալ. մեր հողը քիչ ե, և պետք ե այն-
պիսի ձեերով մշակել նրան, վոր ամեն տարի
նրանից բերք ստանանք, այն ել լավ բերք:

Դրա համար ամենալավ միջոցը հողերի հետ
առըքեր սննդանլութեր խառնելն ե: Այն նլու-
թերը, վորոնք խառնում են հողերին, վորպեսզի
նրանցով բարձրացնեն հողի բերքատվությունը,
կոչվում են պարաբանյութեր, իսկ այդ աշխա-
տանքը՝ պարաբանում:

4. ԳՈՍԱՂԲՆ ԻԲՐԵՎ ՊԱՐԱԲԱՆՅՈՒԹ

Ամենալավ պարաբանյութիչ նյութը հողե-
րի համար գոմաղբն ե. նա կոչվում ե լրիվ պա-

բարտանյութ, վորովհետեւ նրա մեջ գտնվում են այն բոլոր սննդարար նյութերը, վորոնք պետք են բուլսերի համար։ Գոմաղբը շատ հարուստ և ազոտալին նյութերով*). զրանից զատ գոմաղբի մոխրի մեջ բավական շատ կալի և ֆուֆոր ե գտնվում։ Յեթե հողերն աղքատացել են սննդարար նյութերով, ապա գլխավորաբար այդ լեռեք նյութերն են, ալսինքն՝ ազոտ, ֆուֆոր և կալիում. մյուս նյութերը հողի մեջ միշտ ել բավարար չափով գտնվում են։ Գոմաղբն իբրև պարարտանյութն իր մեջ ունենում ե այդ լեռեք նյութերն ել, վորովհետեւ դրանք մի ժամանակ բուլսերի մասն են լեղել կազմած և այդտեղից ել անցել են գոմաղբի մեջ։

Բացի սննդարար նյութերից գոմաղբը հարուստ ե նաև այրվող նյութերով (վորոնք ուրիշ անունով կը չվում են որդանական նյութեր)։ Այդ նյութերն անմիջապես բուլսին անունդ չեն դառնում, բայց նրանք լավացնում են հողը. ալդ

*) Գոմի ներսում կամ աղբակույտերից գրեթե միշտ սուր, ծակող հոտ և գալիս, վորը լեռբեմն աչքերից արտասուր և բերում։ Այդ հոտը նման և նաշտիրի սպիրուի հոտին, վորը տալիս են ուշագնացներին և գլխացավ ունեցողներին շնչելու։ Ահա ալդ հոտի նյութի մեջն և դանվում գոմաղբի ազոտի մեծ մասը։

նյութերի շնորհիվ ավագու թեթև հողերը կապվում են և մշակության համար լավ հող են դառնում, իսկ մյուս կողմից ծանր կավալին հողերը, վորոնց մշակել չեն լինում ծանրության պատճառով, գոմաղբի շնորհիվ փափկում և թեթևանում են: Փոշիացած, մանրացած հողերի հատիկները գոմաղբի շնորհիվ իրար են կապվում (ինչպես ցեմենտը ավաղի հատիկներն են կապում), դառնում են կնձիկներ: Կնձիկավոր հողերում բույսերի արմատներն ավելի ազատ են տարածվում և լավ մնունդ են առնում:

Ուրեմն գոմաղբի գործածությունը հողերի մեջ թե շատացնում եք բերքն իր սննդանլութերի միջոցով և թե լավացնում եք փշացած հողը:

Բայց յեթե խնամքով չվարվեն գոմաղբի հետ, յեթե նրան լավ չհավաքեն, չպահպանեն, ապա նա մեծ չափով իր լավ հատկությունները կկորցնի և ցանկալի արդիունքը չի տա:

5. ԻՆՉԻ՞Ց Ե ԿԱԽՎԱԾ ԳՈՄԱՂԲԻ ՎՈՐԱԿԸ

Դոժաղբի ամենակարևոր մասը կենդանու աղիքներից դուրս լեկող թրիքն եւ: Թրիքի մեջ են անցնում կերի գրեթե ամբողջ մոխրալին մասերը (գլխավորաբար կալիումը և ֆոսֆորը), անմարս փայտային ծղոտի մասերը և մեծ քանակությամբ ջուրը: Մեզի միջոցով դուրս են գա-

Այս կենդանու մարմինի մասը կազմող նյութերը, դրանցից ամենակարևոր հանքային նյութն ազոտըն եւ կալիումը։ Ցամքարը, բացի կենդանու տակը չոր և տաք պահելուց, լերկու ուրիշ կարենը նշանակություն ունի. ա) նա իր մեջ ծըծում եւ կենդանու մեզը և թրիքի ջրային մասերը, չի թողնում, վոր նրանք հոսեն և կորչեն գոմաղբի միջից։ բ) Ցամքարը, լեթե ծղոտ ե, տերև եւ կամ չորացրած վայրի մոլախոտ, ապա նա իրեն հերթին հարստացնում ե գոմաղբը հանքային սննդարար նյութերով, վորովհետև ցամքարն իր մեջ ունենում է ազոտ, փոսֆոր, կալիում։

Այս ասածներից ել յերեսում ե, վոր տարբեր կենդանիներից ստացված գոմաղբները միատեսակ հատկության չեն լինում, վորովհետև տարբեր կենդանիների կերերը նման չեն լինում։ Վորքան հարուստ լինի կերը հանքային նյութերով, այնքան ել գոմաղբը հարուստ կլինի դրանցով։

Գիտնական Վոլֆը քննել եւ տարբեր կենդանիներից ստացված գոմաղբները և կազմել ե այս աղյուսակը։

Հազար (1000) մտս գոմաղբի մեջ գտնվում է

Ինչ կենդանու աղք ե	Քուլ	Աղու	Գուփ	Կազմ.
Կով	775	3,4	1,6	4,0
Ձի	713	5,8	2,8	5,3
Վոչխար	646	8,3	2,3	6,7
Խող	724	4,5	1,9	6,0

Այս ցուցակից լեռնում ե, վոր կովի գոմաղբն ամենաջրիկն ե և ավելի աղքատ ե հանքային նյութերով, քան թե մյուս կենդանիներից ստացված գոմաղբները։ Դա նրանից ե, վոր կովն ավելի շատ ջրալի կեր ե ուտում, իսկ ձին, վոչխարը կամ խոզն ավելի չոր կերեր են ուտում։

Լավ գոմաղբ ստանալու համար առաջին խնամքը պետք ե հենց գոմի մեջ տանել, թույլ չպետք ե տալ, վոր կենդանու մեզն առանձին առուներով գոմաղբից հեռանա, թափվի գոմի փոսերի մեջ և ծծվի հողի մեջ. պետք ե հիշել, վոր գոմաղբի ամենաարժեքավոր մասը— ազոտը և կալիումը մեծ մասով մեզի մեջն են գտնվում։ Զափաղանց կթուլանա գոմաղբի ուժը, լեթե կենդանու մեզը նրա հետ խառնված չլինի։ 1000

մաս մեղի մեջ 10 մասն ազոտ և և 13 մասը՝ կալիում, իսկ նույնքան թրիքի մեջ 4 մասն եմիայն ազոտը և 1 մասից ել պակաս՝ կալիում։ Սրանից յերկում ե, վոր գոմաղբի լավությունը շատ խոր չափով կապված ե նրա մեջ յեղած մեղի քանակությունից։

Լավ տնտեսություններում այնքան շատ կարևորություն են տալիս մեղին, վոր յերբեմն նրան հավաքում են առանձին և տակառներով տանում են արտերը ջրելու, ավելի ճիշտը՝ պարարտացնելու։

6. Ի՞ՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ ԳՈՄԱՂԲԸ

Գոմաղբը պահելու համար ամենաառաջին աշխատանքը գոմի ներսումն ել լինում։ Վորպեսզի վոչ թրիքը կորչի, վոչ ել մեղը լճակներ (գյոլ) կազմի և հողի մեջ ծծվի, պետք ե գոմի հատակն այնպես շինել, վոր փոսեր չլինեն. լավ ե գետինը սալահատակել կամ լավ պնդացնել կափով։ Այդպիսի գոմերում մաքրությունն ել հեշտ ե պահպանել։

Գոմաղբը գոմի ներսում յերկար թողնել չի կարելի. նրա հոտից մսասվում ե տավարը. պետք ե ամեն անգամ գոմը մաքրելիս թրիքը, մեղը և ցամքարն իրար հետ լավ խառնած գուրս տանել գոմից։ Քանի վոր ամեն որվա գոմաղբն անմիջապես դաշտը տանել չի լինում, դրա համար

ել գոմի մոտ նրան հավաքում և պահում են մինչև արտ տանելու ժամանակը։ Մինչև հիմա դեռ մեր գլուղացիներից շատերը, վորոնք գոմաղբն ուզում են պատրաստել պարարտացման համար, հոգ չեն տանում նրան գոմից դուրսլավ պահելու վրա։ Նրանք հավաքում են բակի մի անկյունում, թողնում են արևի և անձրևի տակ, դրանից փչանում ե գոմաղբը։

Ահա թե ինչու…

Արևի և քամու տակ մնացած գոմաղբը չուրանում ե, նրա միջից վոչ միայն ջուրն ե դուրս դնում, այլ գոմաղբի ամենաարժեքավոր մասը, ալսինքն՝ ազոտը։ Դրանից խիստ թուլանում ե գոմաղբը, նրանով պարարտացըրած հողից լավ բերք ստանալ չի լինում։

Անձրևի տակ մնալով՝ գոմաղբը լվացվում ե, նրա մննդարար ամենաարժեքավոր նյութերը—ազոտն ու կալիումը ուրիշ ճանապարհով դուրս են դնում։ Գոմաղբի կույտերից այդ ժամանակ փոքրիկ առվակներ են դուրս հոսում, նրանց ջուրը դեղին, մութ գույնի յե լինում։ յեթե գոմաղբը լավացնում ե բերքը, ապա միայն այդ գունավոր ջրի մեջ յեղած նյութերի շնորհիվ ե. դրա համար ել ամեն մի գիտակից գլուղացի պետք ե շատ խնամքով պահպանի գոմաղբը և շթողնի անձրևի և արևի տակ։

դոմաղըն անմիջապես դաշտ տանել և հողի հետ
խառնել չե կարելի:

Յերբ ամբողջ աղբանոցը լցվել ե գոմաղբով
և դեռ բավական ժամանակ կա մինչև արտ տա-
նելը, ապա յերեսից 2—3 վերշոկ հաստության
հողով ծածկում են. դրանով պաշտպանում են
չորանալուց և ազոան այդ ձևով ավելի լս վ և
առանց կորուստի յերկար ժամանակ կարելի լե
պահել:

Աղբանոցի գրսի շերտի մեջ նյութերը շատ
են տաքանում և արագությամբ քայլալիում են.
դա նըանից ե, վոր այդ տեղերում ոդ շատ ե
մանում. ներսի շերտերում, վորովհետև ոդ չե
մանում, դրա համար ել նյութերը կամաց կա-
մաց են քայլալիում: Վորքան շատ ոդ մտնի աղ-
բանոցի մեջ, այնքան արագ կքայլալիվեն նյու-
թերը, իսկ դրանից ել ազոտը շատ մեծ չափով
կկորչի: Վորպեսզի այդպես չլինի, պետք ե աղբը
չխառնել, չքըքըել, ընդհակառակը՝ լավ կոխո-
տել պնդացնել և միշտ թաց պահել:

7. ԳՈՄԱՂԲԸ ԴԱՇՏ ՏԱՆԵԼԸ

Աժառվա ընթացքում աղբանոցում հավա-
քած և հասունացած գոմաղբը կարելի յե արտ
տանել աշնանավարից առաջ, առնասարակ այն
ժամանակի, յերբ գյուղացին և լծկաններն ազատ
են մյուս աշխատանքներից:

Աղբանոցի աղբը սալլերի վրա բարձելիս
չպետք է վերցնել լերես-լերես շերտերով, այլ
պետք է կտրել աղբակույտի ամբողջ հաստու-
թյան շերափակ: Դա նրա համար, վոր աղբանոցի
մեջ աղբը միատեսակ չի լինում, նրա լերեսի
շերտն ավելի չոր և աղքատ է լինում, քան թե
ներքեսի շերտերը: Կարևոր է, վոր ամբողջ արտը
միատեսակ գոմաղբով պարարտացվի. այդ ձևով
յեթե գոմաղբը բարձեն սալլին, ամեն մի սայ-
լում միատեսակ աղբ կլինի:

Մեկ հեկտար (գեսիատինից քիչ պակաս) հողամասի համար բավական եւ մոտավորապես 2400 փութ գոմաղբ, կամ 80 սայլի բեռ, յեթե ամեն սալլին 30 փ. բեռ հաշվինք: Այդ 80 սալլ գոմաղբը մեկ հեկտար արտի վրա հա-
վասարապես փռում են, վորպեսզի անհավասա-
րություն չլինի. այդ աշխատանքն այսպես կա-
րելի յեւ անել. արտերի մի անկյունում յեթե
թափեն առաջին սայլի աղբը և նրանից հետո
ամեն մի 15—16 քայլի վրա՝ մեկը, արտի յեր-
կարությունով և լայնքով, ապա ամբողջ արտի
վրա, մոտ 80 սայլ աղբ, հավասարապես կըտ-
ժանվի:

Յեթե ծուլանան և թողնեն գոմաղբը կույ-
տերով հողի յերեսին, յեթե անմիջապես չխառ-
նեն հողի հետ, դրանից մեծ կորուստ կլինի.

գոմաղբի արժեքավոր սննդարար նյութը կհեռանա ողի մեջ. մյուս կողմից կույտերի տակի հողը կծծվի սննդարար նյութերով։ Միայն ալդ տեղերի հողերը կպարարտանան լավ. դրանից արտի վրա բույսերն անհավասար աճեցողություն կունենան։

A 4734

Ուրեմն գոմաղբն արտ տանելուց հետո անմիջապես, առանց ուշացնելու, բահերով պետք է փռել հողի յերեսին հավասարապես և խսկույն զութանով վարել և խառնել հողի հետ։

Դարնանավար հողերի համար գոմաղբը կարելի յե դաշտ տանել ձմեռը. այդ ժամանակ առհասարակ դյուղացու և լծկանի ազատ ժամանակն եւ Բայց ձմռան աղբը հողի յերեսին անմիջապես չեն փռում։ Արտի մի անկյունում մեկ կտմ յերկու մեծ կուլտ են անուժ, միքիչ պնդացնում են, հողով 2—4 վերշոկ հաստության շերտով ծածկում և այդպես թողնում մինչև դարուն։ Դարնան վարից առաջ հավասարապես տարածում են հողի յերեսին և հետո վարելով խառնում են հողի հետ։

8. Ի՞ՆՉ Ե ԿԱՏԱՐՎՈՒՄ ԳՈՄԱՂԲԻ ՀԵՏ ՀՈՂԻ ՄԵԶ

Հողի հետ խառնված գոմաղբը կամաց-կամաց փառում ե, նրա սննդարար նյութերը դառնում են բույսերի մամուռ, ոգտակար—մարսելի։



Մինչև վոր գոմաղբը լավ չքակքալվի, նրա նյութերից բուլսերը սնվել չեն կարող. դրա համար հողի մեջ պետք է լինի բավական խոնավություն, տաքություն և ող: Այդ պայմանները լինելուց հետո հողի մեջ զտնվող բակտերիաներն ուժում, քակքալում են նրան և պատրաստում են բույսերի համար:

Ահա այդ ժամանակ ե, վոր գոմաղբն իր մյուս ողաակար գործն ե կատարում. նա ցեմենտի նման հողի փոշիացած հատիկներն իրար ե կապում և դարձնում ե փափուկ հող--կնծիկներով հարուստ:

Այդ բոլոր փոփոխությունների համար անհրաժեշտ ե նաև ժամանակ. 2400 փ. գոմաղբը միանգամից հողի միջից չի սպառվում, և մեկ տարվա բուլսերը նրա ամբողջ նյութը վերցնել չեն կարող: Նայած հողերին, ողի տաքության և խոնավության, գոմաղբի քակքալումը ե ողագար աղղեցությունը 2—5 տարի կարող ե շարունակվել: Սրա համար ել ամեն տարի մեկ հեկտար հողին 2400 փ. գոմաղբ տալու կարիք չկա: Մի անգամ լրիվ պարարտացրած հողերը սովորաբար 4 տարի այլևս կարիք չեն ունենում սլարարտացման. այդ հաշվով ամեն մի տարվան ընկնում ե 600 փ. կամ 20 սալլ գոմաղբ:

Մեր տերկիրը, մանավանդ բամբակի շրջան-

ներում, վորովինետի տաք եւ և աըևոտ, ալդ
սկատճառով ել գոմաղբը սովորաբար 2 տարում
արդեն քայքալվում եւ Դրա համար ել 2 տարին
մի անգամ կարիք կլինի 1200 փ. կամ 40 սալ
գոմաղբ խառնել հողին։ Դա մեկ ել նըա համար,
վորովինետի մեզ մոտ առհասարակ գոմաղբ քիչ
կա և պետք ե խնալող լինել։

9. ՎՈ՞Ր ՀՈՂԵՐԸ ՅԵՎ Ի՞ՆՉ ԲՈՒՑՍԵՐԿ ԱՐԻՔ ՈՒԽԵՆ ԳՈՄԱՂԲԻ ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ

Մշակվող հողերն իրենց լավ կամ վատ
հատկություններով խիստ տարբերվում են իրա-
րից. կան ավազոտ հողեր, կիսաավազոտ-կի-
սակավային հողեր, կավային հողեր, սևահողեր,
բողահողեր և այլն։ Հայաստանում այս բոլոր
տեսակի հողերն ել գտնվում են. իհարկե, սրանք
բոլորն ել հավասար չափով գոմաղբի կարիք
չունեն։

1. Սեվահողերը (սրանցից կան լենինակա-
նի գագառում, Ախտայի, Սուխոյ-Թանտանի,
Դիլիջանի շրջաններում և այլն) թե հարուստ
են սննդանլութերով (ազոտով) և թե փափուկ,
կնձիկային կազմություն ունեն։ Դրա համար ել
կարելի յեւ ասել, վոր սրանք գոմաղբի կարիք
չունեն։

2. Ավագոտ յեվ կիսաավագոտ հողերը գրե-

թե միշտ աղքատ են լինում սննդանյութերով, մեկ ել նրանց մասնիկներն իրար հետ կապակցված չեն. ուրեմն ալսպիսի հողերը խիստ կարիք կունենան գոմաղբի:

3. Ծանր-կավային հողերը (շատ կան Արարատյան դաշտում) սովորաբար հարուստ հողեր են, բայց մշակել դժվար ե, և բույսերի արմատներն ազատ տարածվել չեն կարող: Ուրեմն գոմաղբը սրանց կազմությունը լավացնելու, թեթևացնելու համար շատ կարևոր ե:

4. Նաև փոփացած կավային հողերը վատ են մշակության համար, վորովինետև անձրևներից հետո կամ ջրելուց հետո նրանց լերեսը փակվում ե հողի պնդացած կեղևսվ. այդ կեղևը մեծ չարիք ե. նա խեղդում ե բույսերին, չի թողնում զարգանան և շնչեն: Իսկ դաշտավին շըջանի գյուղացիները լավ գիտեն, թե ինչ դժվարությունով են փշրվում դրանք: Ահա այդ հողերի փոշիացած մասնիկներն իրար կապելու և կնձիկներ դարձնելու համար գոմաղբի նմանը չկա:

Գոմաղբի պահանջը բույսերի կողմից շատ մեծ չափով կախված ե հողի տեսակից: Բայց և տարբեր բույսեր տարբեր չափով են նրա կարիքն զւում: Զկա բույս, վոր կանոնավոր զարգանալու համար ալս կամ այն չափով գոմաղբի

նլութ չպահանջի։ Բայց մենք պետք ե այդ արժեքավոր նլութը տանք յավ և թանգարժեք բույսերին։

Դաշտավալը երում բամբակի համար գոմաղը չափազանց կարեոր ե. նա թե լավացնում ե հողը և թե բարձրացնում ե բամբակի բերքը. վոչինչ պետք չե խնալել բամբակի համար։

Ճակնդեղը և կարտոֆիլը բավական փափուկ, խորը և հարուստ հողեր են պահանջում. նրանց համար այդպիսի հողեր պատրաստել կարելի յե միայն գոմաղը ոգնությամբ։ Գոմաղը բով պարարտացրած հողերից լերկու անգամ ավելի ճակնդեղ և կարտոֆիլ կարելի յե ստանալ, քան թե չպարարտացրածից։

Ծխախոտը, բոստանը, հացահատիկները նույնպես գոմաղը կարիք են զգում։

Բայց թիթեռնածաղիկ բույսերը (յոնջա, լոբի, մաշ, կօրնգան, վիկա, սոյա և ալին) այնքան շատ պահանջ չունեն, լեթե նրանց հողը լավ կարած և փափկացրած ե լինում. նրանք, ընդհակառակ, իրենք են հարստացնում և լավացնում հողը։

Մշակվող հողի վրա յեթե մեկ լերկու բույս միայն ցանեն, իհարկե վատ ե, իսկ յեթե 4—5 բույս իրար յետեից մշակվեն, այսպես ասած՝ յեթե լավ ցանքաշրջանառություն պահպանեն,

այն ժամանակ ավելի քիչ գոմաղբով ավելիշ շատ արդիունք կստացվի. այդ ձևով միայն կարելի կլինի լրիվ ոգտագործել թե դոմաղբի և թե հողի նյութերը:

10. ԻՆՉՈՎ ԼՐԱՑՆԵԼ ԳՈՄԱՂԲԻ ՊԱԿԱՍԸ

Ինչքան ել խելոք լինենք և խնայողությամբ գործածենք գոմաղբը, միենույն ե, մեր ամբողջ հողերը նրանով պարարտացնել չենք կարող:

— Ինչո՞ւ:

— Վորովհետև գոմաղբ քիչ ունենք:

Հայաստանի կովերից ամեն մեկից միջին հաշվով մեկ տարվա մեջ 400 փ. գոմաղբ հազիվ թե ստացվի: Դա յել այն ժամանակ, յեթե կովս ամբողջ տարին կապված մնա ախոռում, և նրա ամբողջ գոմաղբը հավաքենք, թայց գիտենք, վոր մեզ մոտ արդպես չե:

— Մեր գոմաղբը մեզ չի բավարարում. ուրեմն ինչ անել:

Ահա թե ինչ. —

1. Պետք ե տնտեսության մեջ ցանովի խոս մշակել. դրանով թե հողը կլավանա, թե նրանից հետո յեկող բուկսերի բերքը կշատանա, և թե անասունների թիվը շատանալով, անտեսության մեջ գոմաղբ կստացվի:

2. Ոգտագործել տան յեվ բակի աղբը, հավերի աղբը, վոսկըները և աղն. դրանք լավ պահելու և ճիշտ ոգտագործելու դեպքում գոմաղբին հավասար արդյունք կտան։ Թոնիրների մոխիրը մասնավորաբար, պետք և պաշտպանել անձրեխց և քամուց, հավաքել առանձին և տանել արտերը պարարտացնելու։ Դրանով թե կը բարձրացնեք ձեր հողերի բերքատվությունը, և թե ձեր տներն ու բակերը կմաքրվեն կեղտությունից։

3. Լրիվ ոգտագործել արտամնոցների աղբը. պետք և իմանալ, վոր մարդկանց աղբը նույնական շատ լավ միջոց և հողերի բերքը բարձրացնելու համար։

4. Բացի այս բոլոր միջոցներից, վորոնք անսակության ներսումը կան, պետք և ոգտագործել մեծ չափով նաև հանքային արհեստական պարարտանյութերը. դրանցից մասնավորաբար սուպերֆոսֆատը և ցիանամիզը հրաշալի նյութեր են՝ հողերը պարարտացնելու համար. գոմաղբին նրանք ոգնության են գալիս, նրա պակասը լրացնում են։ Փոխանակ մեկ հեկտարի 2400 գ. գոմաղբ գործածելու, բավական կինի 1200 գ. նրանից, իսկ մյուս կեսի փոխարեն 15—20 գ. սուպերֆոսֆատ։

Ամեն մի գյուղացի պետք է նանաչի յեվ գործածի այդ նոր նյութերը։

11. ԻՆՉՊԵՍ ԱԶԱՏՎԵԼ ԳՈՄԱՂԻ ՎԱՐԵԼՈՒՑ

Բայց դուք կը ողոքեք:

— ԶԵ վոր գյուղացին վառելիք չունի, ի՞նչ վառի, յեթե գոմաղբով հողերը պարարտացնի:

Դա, իհարկե, մեր ամենամեծ չարիքն եւ բայց պետք եւ կովենք այդ չարիքի դեմ:


Տնտեսության մեջ, վորպեսզի վառելու վայր ունենանք, պետք եւ ծառեր տնկել. տների շուրջը, ճանապարհների և առուների լեզերքներին ազատ տեղեր շատ կան, դրանք չեն ոգտագործվում. ինչու ծառերով չզբաղեցնել այդ տարածությունները: Պետք եւ զարկ տալ նաև անտառներին, չվոչնչացնել դրանք, ընդհակառակը, ծրագրված ոգտագործել. նրանցից կստացվի բավարար վառելիք: Կամաց-կամաց պետք եւ ձեռք քաշել թոնիրներից, դրանց փոխարեն կառուցել գյուղում բաղնիք, հացի փուռ, կերակուրը լեփել փայտով կամ նավթով, փոխանակ աթար վառելու: Բնակարանները տաքացնել վառելափայտով, փոխանակ թոնրի շուրջը նստելու: Ձեռք բերել քարածուխ և քարածուխի վառարաններ և այլն և այլն:

Պետությունն այս գործում ամեն ինչ կանի, յեթե գյուղացիներն իրենք շարժվեն: Ձեզ որինակ լենինականի գավառը. այնտեղ գավզործ-

կոմը գյուղացիներին տալիս ե վայտ, քարածուխ, նավթ և ուրիշ վառելիք, վորպեսզի նրանք կարողանան իրենց արտերը պարարտացնել դոմադրով։

Արանում մեծ գործ պետք ե անեն կոլեկտիվ տնտեսությունները. չե՞ վոր ամբողջ գյուղը նրանց որինակով պետք ե առաջ գնա, դուրս դա հին, նահապետական դրությունից։ Կոլեկտիվ աշխատանքով գյուղացին հնարավորություն ունի բնության ուժերը լրիվ կերպով ոգտագործելու։ Կոլեկտիվ տնտեսություններն այս խնդրում ել պետք ե մրցության մեջ մտնեն։








ՑԱՆԿ

Եջ


1. Ի՞նչ բան ե գոմաղբը	3
2. Ի՞նչ նլութեր կան գոմաղբի մեջ	4
3. Լավ բերք ստանալու համար ինչ պետք ե տալ բույսերին	6
4. Գոմաղբն իբրև պարարտանլութ	7
5. Ինչից ե կախված գոմաղբի վորակը	9
6. Ի՞նչպես պահել գոմաղբը	12
7. Գոմաղբը դաշտ տանելը	15
8. Ի՞նչ ե կատարվում գոմաղբի հետ հողի մեջ .	17
9. Վեր հողերը և ի՞նչ բույսեր կարիք ունեն գո- մաղբով պարարտացման}	19
10. Ի՞նչով լրացնել գոմաղբի պակասը	12
11. Ի՞նչպես ազատել գոմաղբը վառելուց . . .	24











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039885

(0643)

A I
4734

ԳԻՆԸ 5 ԿՈՊ. Մ., (1 մամուչ)



Е. Мовсисян

Навоз как удобрение

Госиздат ССР Армении
Эривань—1930